Резня была ужасной: вопли и рыдания печальным эхом раздавались над (покрытыми черным) головами жителей Черной реки [Сев Гета]. С черной водой Сев Гета смешалась черная кровь. Боязливая часть народа покорилась фанатичным зверям, которые обещали прекратить резню, чтобы на следующий день объявить о решении и произвести обрезание.

На следующий день решение о том, что в день святого Воскресения они готовятся к обрезанию, было сообщено Гуруфу оглы Мехмету.

Резня была приостановлена. Боголюбивые люди собрали своих детей, легкий домашний скарб и удалились в черные леса, окружавшие Сев Гет, другие попали в когти черных зверей, остальные направлялись вглубь леса. Они пошли на запад через густой и тернистый лес, куда не только не ступала нога человека, но

даже зверей.

Среди этих беженцев были ревностные верующие люди, которые заботливо собрали истерзанное тело Тэр Карапета и, взвалив на спину как нечто драгоценное, последовали за беглецами.

Положение беженцев было ужасным, в лесах до сих пор отзываются эхом [их вопли]; некоторые со стенами звали своих любимых-родных по крови, другие со стенаниями шептали имена убитых родственников, иные задыхались от жажды и голода, визг и вопли детей повергали в страх скот и зверей, тысячелетия не слышавших человеческого голоса.

Если бы вы видели эти леса, вы бы решили, что никто из прошедших через них не мог спастись, но я скажу, что одна десятая вышла к Баберду, одна пятая - к близлежащим к Трапезунду местностям: Захносу, Апиону, Калафке и другим местам, пять четвертых [людей], вышедших из лесов, перебрались в Джаник, который находится к западу от Трапезунда на расстоянии одного дня морского пути.

Спасшиеся из родни Тэр Карапета дошли до села Калафка⁸, где и обосновались и где похоронили часть изрубленного его тела, часть же взяли с собой ушедшие в сторону Баберда.

А на той стороне, в Кара-дерэ, турецкая чернь почти со ста деревнями сделала то же, что в Торосли: бежавшие уже бежали, часть населения была уничтожена, часть ложно отреклась, чтобы избежать смерти.

В самый день Пасхи со всего края под огромными раскинутыми грабами близ церкви села Торосли собралось около пятисот видных людей и подверглось обрезанию.

Через неделю теми же грабами в зурну дули тридцать зурначей. Это торжественно подвергались обрезанию родные ранее подвергнутых обрезанию. Число их достигало тысячи.

Сын замученного Тэр Карапета был рукоположен в священники села Калафка и получил имя своего отца.

Он дал обет, что всегда из их рода будут рукоположены священники, по имени Карапет, и хотя бы один раз в год они будут тайно посещать Сев Гет для того, чтобы утешить народ.

1. Кара-дерэ - по тур. Черная река. В переводе на армянский язык - Сев Гет. Маленькая провинция (каза) Сюрменэ известна и под именем Сев Гет.

2. Амшенцы-в 789-790гг., спасаясь от арабского ига, 12000 армян из гаваров (областей) Арагацотн, Котайк провинции Айрарат и области Артаз провинции Васпуракан Великой Армении во главе с нахарарами отцом и сыном Шапухом и Амамом Амадуни и другими бежали и обосновались в городе Тамбур, который находился в плодородном крае между севером Пархарских гор и югом черноморской гавани Атина. Но дядя Амама Амадуни - грузинский князь Вашден, получив от арабов войско, совершает предательское нападение и уничтожает г. Тамбур. Амам восстанавливает город и называет его Амамашен. Название в дальнейшем произносится несколько сокращенно и преобразуется в Амшен. Армянское княжество Амшена сохраняется примерно в течении 7 веков, и лишь в 15-ом столетии попадает под власть турков.

3. Полис - краткое название Константинополя.

4. Пархар - Восточно-Понтийские горы на севере Армянского нагорья. Начинаются с реки Мелет параллельно юго-восточному побережью Черного моря и тянутся до нижнего течения реки Чорох на востоке.

5. Один священник - Амшен имел примерно 10000 домов, Сев Гет - 5-6000 армянских домов. Эти 16 000 домов армян имели 3-4 священника (примеч. автора).

6. Торосли - армянское название - Торосцоц гех.

7. Тэр - владыка.

8. Калафка - находилась на расстоянии 5 часов пешего хода от Трапезунда. До Геноцида в селе имелось 63 дома (армянские семьи), а также армянская церковь. В 1850-х гг. открылась и армянская школа.



«Չայն համալսարան» թերթի 2005թ. NN 3-4-ում տպագրվել էր Եղեռնի տարիների մասին Ադաի Բյուսեյանի մեկ հոլովը՝ «Ապրիլ որպես հայ» վերնագրով: Այն լայն արձագանք գտավ, իսկ իր մայիսի 25-ի և 26-ի համարներում արտատպեց Փարիզի «Յառաջ» թերթը: Այս անգամ «Չայն համալսարան» ընթերցողներին են ներկայացնում Ադաի Բյուսեյանի մեկ ուրիշ հոլովը՝ «Գայլը» վերնագրով: Հեղինակի մասին ասեն, որ ծնվել է 1905-ին Տրապիզոնի նահանգի Սամսունի գավառի Թերմեի գավառակի Թելիփուղար գյուղում: Եղեռնի օրերին նրանց բազմանդամ ընտանիքից և ութ երեխաներից փրկվել են միայն ինքն ու ավագ քույրը՝ Սարիամը: Ապաստանել է Սեբաստիայի և Սարսելի որբանոցներում, այնուհետև 1928-ին Փարիզում ամուսնացել նույնպես որբ, Կորնթոսի (Հունաստան) և Սարսելի որբանոցներում հանգրվանած չարձամբացի Արշալույս Պորգալյանի հետ: Իմանալով, որ ավագ քույրն ապրում է Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջանի Նեֆտեգորսկ գյուղում, 1936-ին կնոջ և երկու երեխաների հետ հայրենադարձվել է Հայաստան: 1946-ին տեղափոխվել է Օնվափնյա Դագոմիս ավան, ուր և 1950-ին քաղաքական մեղադրանքով դատապարտվել է 10 տարվա ազատազրկման, բայց 1955-ին արդարացվել է և քննադատվել հաստատել քրոջ մոտ՝ Նեֆտեգորսկում, ուր տեղափոխվել էր նրա ընտանիքը: 1963-ին կնոջ և երեք երեխաների հետ վերադարձել է Երևան, բայց հաճախ է մեկնել ազգականների մոտ՝ Նեֆտեգորսկ և Չեռնիգոլսկոյե, ուր և մահացել է 1975-ին և թաղվել Նեֆտեգորսկում:

Ս. Վարդանյան



1915 թվականին՝ արևմտահայերի բռնազաղթի օրերին, ծնողներս թուրքական յաթաղանի գոհ գնացին: Ես որպես անչափահաս, հրաշքով ազատվեցի և ապաստան գտա օսական մի գյուղում, որը գտնվում էր Սեբաստիայի նահանգում: Այդ եղերական թվականից երեք ու կես տարի էր անցել, ծառայում էի իմ օս տիրոջ մոտ և խոսում էի իմ տերերիս լեզվով՝ իրոներեն, որին բավական լավ էի տիրապետում:

1918թ. ուշ աշնանն էր, մի շատ ցուրտ

ԱԿԱՍԻ ՔՅՈՍԵՅԱՆ

Գ Ա Յ Ի Ը

ու քամոտ օր: Արդեն մթնել էր: Ցրտաշունչ քամին սաստիկ ուժով փչում էր, թվում էր, թե ուզում է տուն ու տանիք օդ թռցնի: Քամին կանգ էր առնում, կատաղած խոյի նման հետ-հետ էր գնում ու հարծակվում էր տների, գոմերի և մարագների վրա, ուժեղ հարվածում, փորձում էր ամեն ինչ փլցնել:

Այդ իրիկուն մեր տնեցիները տխուր էին ու հուզված: Դրա պատճառն այն էր, որ քամին, իր խեղճությունները շարունակելով կարող էր տան կտուրը օդ թռցնել, և կամ մի այլ վնաս հասցնել, այլ կար ավելի լուրջ պատճառ, դա այն էր, որ մեր քսանից ավելի ձիերի երանակը մնացել էր դուրսը, բաց դաշտում և այն էլ մի այնպիսի ժամանակ, որ օր ու գիշեր գայլերը անխնա խժռու ու դուրսը մնացած բոլոր տեսակի ընտանի կենդանիներին: Տան միակ «տղամարդը» ես էի, ծերունի տերս տանը չէր, տեղ էր գնացել, նրա երիտասարդ որդին բանակում էր: Մեր համազուգուցներից մեկը մեզ լուր էր բերել, թե ծեր ձիերը հենց ծեր առվույտի արտում՝ յոնջալուսն ենք տեսել, զգույշ եղեք, դուրսը չման, գնացե՛ք բերեք: Իրոք որ դուրսը մնացած ընտանի անասունները շատ հաճախ կեր էին դառնում գայլերին: Իմ տիրուհիները սկսեցին իմ ինքնասիրությունը շոյել, իմ չունեցած առավելությունների և չգործած քաջագործությունների մասին խոսել: Հիշեցրին թե ես ինչպես էի դեռ անցած տարի համարյա միևնույն ամիսներին առանց գայլերից վախենալու գնացել մեր դուրսը մնացած և այն էլ նոր ծնած կովը տուն բերել և այժմ ի՞նչ կա որ, կզնամ յոնջալուղ, որը գյուղից մեկ ժամվա ճանապարհի չափ հեռու էր և այնտեղից մեր ձիերի երանակը կքշեմ կբերեմ գյուղ:

-Չեմ գնա,- ասում էի ես,- չեմ գնա, որովհետև վախենում եմ գայլերից:

Թե ես կարողանում էի համառել, ընդդիմանալ իմ տիրուհիներին, դրա պատճառը մասամբ այն էր, որ ես բոլորովին էլ այդ տան ծառան չէի համարվում, այլ իբրև թե նրանց իսլամացած որդեգիրն էի, նոր անունս Ֆիքրի էր: Ի վերջո, ես հոժարեցի գնալ ձիերի հետևից, երբ նրանք ինձ խոս-

տացան գեներ տալ: Ես իմ մանուկ հասակից սիրել եմ գեները: Տնեցիների՝ ինձ տված գեները շատ գեղեցիկ, փայլուն կոթով յոթ կրականոց մի ատրճանակ էր: Ատրճանակն իր պատյանի մեջ տեղավորելուց հետո կախեցի իմ իրոնական Գիլելազարդ գոտուց: Երբ այսպես գինվեցի, իմ սրտից բոլորովին անհետացավ վախը, ես կարծես մեծացա: Գյուղից դուրս գալով քայլերս ուղղեցի դեպի առվույտի արտը: Գնապարհին ինձ այնպես էր թվում, թե յուրաքանչյուր թիփ ու քարի ետևը մի գայլ է պահված, որը կարող է անսպասելի իմ վրա հարձակվել: Ես ատրճանակս դուրս

քաշեցի պատյանից և ձեռքումս պինդ բռնած, արագ ու զգույշ շարունակեցի ճամփա: Լուսնի կլոր գունդը աղոտ կերպով լուսավորում էր երկիր կոչված անծայրածիր կրկեսային հարթակը:

Երբ ես հասա յոնջալուղ, մեր քսանից ավելի ձիերը խմբվել էին կլոր՝ գլուխ-գլխի: Ձանթիկներն իրենց մատղաշ մտրուկներին պատսպարել էին իրենց վզերի տակ ու առջևի ոտքերի արանքում: Ձիերը մարտական դիրքով պատրաստ էին հակահարված տալ իրենց գոյությունը սպառնացող սոված գայլերի ոհմակին: Միայն «իրամանատարը»՝ բաց մոխրագույն բծերով, հինգ-վեց տարեկան, շատ գեղեցիկ հովատակը, իրար գլխի հավաքված ձիերից 15 քայլ հեռու, իր ոստիկն գետնին գամնից կանոն, պտտվում էր նրա շուրջը, երբեմն կանգ էր առնում, փռշտում, վրոջում ու սարսափելի վրդոված ծառս էր լինում, բարձր ու կատաղի խրխնջում, առջևի ոտքերով արագ-արագ դոփում էր ոտքերի տակի հողը, կարծես ուզում էր դեռևս կենդանության նշաններ ցույց տվող հակառակորդին վերջնականապես ջախջախել, լռեցնել: Ատրճանակս ձեռքումս պատրաստ բռնած, զգույշ քայլեցի դեպի հովատակը: Երբ մոտեցա, ես իմ տեսածից վախեցած երկու քայլ ետ նահանջեցի: Հովատակից ընդհանրապես չորս քայլ հեռու պառկած էր մի սկզբ, մոխրագույն գայլ: Գազանը ծանր վիրավորված էր հովատակի հասցրած ուժեղ հարվածներից: Հողին էր մեխվել: Գայլն իր առջևի ոտքերը երկարել էր դեպի առաջ և աշխատում էր առաջ սողալ և, սակայն, այդ նրան չէր հաջողվում, կարծես նրա մեջքին դրվել էր մի սկզբ, ծանր առարկա, որի տակից դուրս չէր կարողանում գալ: Գայլն իր երախը բաց ու խուփ էր անում, սակայն ոչ կազկանձ, ո՛չ էլ ոռնոց չէր լսվում: Կարծես գազանի կոկորդում մի մեծ ոսկոր էր մնացել. գայլն իր պառկած վիճակում գլուխը մի ընդունակ հանգստացնում էր հողի վրա, ապա նորից բարձրացնում, և այսպես շարունակ: Ես երբեք այդպիսի հսկա գայլ չէի տեսել: Երևի դա նրանից էր, որ ես մինչ այդ այդքան մոտիկից գայլ չէի տեսել: Տարիներ հետո, Հունաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, Հայաստանում, Ռուսաստանում իմ այցելած կենդանաբանական այգիներում շատ մոտիկից եմ դիտել գայլերին, բայց նման հսկա գայլի չեմ հանդիպել: Գազանն իր պառկած տեղից միշտ աշխատում էր առաջ սողալ, բայց նրա ետևի մաշր բոլորովին առաջ չէր շարժվում, կարծես ձին նրան գամել էր գետնին: Գայլի յուրաքանչյուր շարժումից ձին լուսնոտի նման զժվում էր, առջևի ոտքերով դոփում էր գետնին, տարօրինակ խրխնջում էր և իր խոշոր աչքերը չքուն էր ոստիկ վրա, որը մահամերձ էր: Ես հինգ քայլ հեռավոր-



րությունից իրար հետևից երկու անգամ կրակեցի կիսամեռ գայլի վրա, որն այլևս գլուխը չբարձրացրեց և անշարժ մնաց պառկած տեղում: Հովատակն իր գեղեցիկ վիզը կորացրեց դեպի ցած, սրեց ականջները, կլոր ու խոշոր աչքերը լայնացրեց, շունչը պահած հետագոտող նայվաքցով ստուգեց հակառակորդին, որն աշարժ պառկած էր իր առաջ: Եվ երբ համոզվեց, որ գայլը սատկել է, մի քանի անգամ ուրախ փռշտաց, վեր բարձրացրեց գլուխը, հաղթողի հպարտությամբ երկար ու ձիգ խրխնջաց:

Դիրքավորված ձիերի խումբը հասկացավ առաջնորդի լեզուն և ինքն էլ իր հերթին պատասխան խրխնջով արձագանքեց նրան: Ոռնացող քամին իր վիուկի ոռնոցը միացրած մտակա ժայռերի քարանձավներում դարձնում սոված գայլերի ոռնոցի հետ, ալիք առ ալիք, մի քիչ էլ ուժեղացրած, մեզ էր հասցնում: Դարձնում մտած գայլերից մեկը սկսում էր ոռնալ, որին հետևում էին այս ու այն կողմ ցրված գայլերը և այսպիսով ստեղծում մի շատ սուսկալի, սարսուռ ազդող գայլային անհամաչափ մի խմբերգ. ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ: Գայլերի ոռնոցից ազդված ձիերը էլ ավելի էին սեղմվում միմյանց: Հովատակը առվույտի այդ մարգագետնում, սպառնալից գայլից ոչ հեռու, մի փոքրիկ բարձունքի վրա հպարտ կանգնած, ականջները սրած՝ դեպի ոռնացող գայլերի կողմն էր նայում: Ա՛հ, որքան գեղեցիկ էր այդ մոխրագույն կլոր ձիերի երկար չէր մնում, ստուգում էր սատկած գայլին, չլինի շարժվի իր տեղից: Երբ համոզվում էր, որ նա սատկել է, մոտենում էր, պտտվում ձիերի շուրջը, քաջալերում նրանց:

Ես մոտեցա գլուխ-գլխի հավաքված ձիերի խմբին: Մատղաշ մտրուկները կծկվել, սմբել, մի տեսակ իրենց պատյանի մեջն էին քաշվել, ապավինելով իրենց հոգատար մայրերին: Թե՛ ձիերը և թե՛ մտրուկները, ջերմախտից վարակվածների նման դողում էին: Ես մոռացել էի ցուրտը, քամին, ձիերին ու ինձ սպառնացող վտանգը և մտածում էի միայն երկյուղած մտրուկների մասին: Ես իմ կյանքում ընտանի կենդանիներից ամենաշատը սիրել եմ ձիերին ու ոչխարներին, մանավանդ մտրուկներին ու գառներին:

Ինձ չհաջողվեց ձիերի արանքից ներս սողալ, հասնել մտրուկներին, շոյել, փաղաքել, սիրտ տալ, քաջալերել նրանց: Ես ինքս էլ դողում էի և, սակայն, չգիտեի թե դա ցրտի՞ց էր, թե՞ գայլերի ահից: Ես գիտեի ձիերից շատերի անունները և կանչում էի իրենց անուններով, մի տեսակ ներկա-բացակա էի անում: Ձիերից յուրաքանչյուրը լսելով իր անունը կամաց մըթմթում էր: Բավական դժվարությամբ ինձ հաջողվեց մարտական դիրք մտած մի կարմիր-սկզբույն գամբիկի գլխին անցկացնել տնից հետո բերած սանձը: Մի կերպ նրան դուրս քաշեցի իր տեղից, կանգնեցի մոտակա փոսի մեջ, ինքս մոտեցա փոսի պոնկին և արագ ցատկեցի ձիու երկ մեջքին: Ձիս քշեցի ձիերի խմբի վրա որ նրանց շարժեմ, իրենց տեղից ցրեմ ու քշեմ դեպի գյուղ: Եվ սակայն, թե՛ իմ սպառնալը, թե՛ իմ փաղաք-չական ու քաջալերող խոսքերը, նույնիսկ երկու անգամ օդում կրակելը, իզուր էին, նրանք փոխանակ ցրվելու, ընդհակառակը, էլ ավելի էին միմյանց սեղմվում: Դարձ էր, որ նրանք իրենց հատուկ բնագրով գզում էին, որ տակավին չի անցել վտանգը:

Մի քանի րոպեով դադարեց գայլերի ոռնոցը, մեղմացավ նաև քամին: Հովատակը որպես իր երանակի քաջ առաջնորդ մի քանի քայլ հեռացավ երանակից, հոտոտեց գայլերի ուղղությամբ, զննեց շրջապատը, իր սուր լսողությունը լարեց քիչ առաջվա ոռնացող գայլերի կողմը, վերադարձավ երանակի մոտ, ինչ-որ խրխնջախառը մըթմթած և քայլերը ուղղեց դեպի գյուղ: Ձիերի երանակը հասկացավ իր առաջնորդին և առանց խուճապի, առանց իրարանցման հետևեց նրան: Ես այսօր էլ շատ լավ եմ հիշում հովատակի չափազանց շրջա-

հայաց, ուշադիր, դանդաղ քայլվածքը: Նա շուտ-շուտ կանգ էր առնում՝ զննում շրջապատը և դարձյալ շարունակում իր ճամփան: Երանակը քայլ առ քայլ հետևում էր հովատակին, երբեմն կամաց, երբեմն արագ, երբեմն վազելով և միշտ առանց ձայնի ու ծպտումի: Մինչև գյուղ հասնելը հովատակը երկու անգամ կանգ առավ, նորից հավաքեց բոլորին գլուխ-գլխի այնպես, ինչպես առվույտի մարգագետնում: Ես շատ ամուր կպել էի իմ ձիու մեջքին և զննում էի ուր որ տանում էր ինձ: Գիշտ է, գայլերը մեզ կրնկակոխ չէին հետապնդում, այլ, լուռ, առանց ոռնալու հետևում էին որոշ հեռավորության վրա: Հագիվ էինք հասել գյուղի ծայրամասը, երբ սկսեցին հաչել շները: Ես անհամբեր էի, ուզում էի որքան կարելի է շուտ տուն հասնել և գլուխ գովելով իմ «գործած քաջագործության» մասին պատմել: Այդ օրը ինչ-որ մուսուլմանական տոն էր, հավատացյալ իսլամ իրոնները, այդ ուշ ժամին, գյուղի կենտրոնում գտնվող մկրթից դուրս գալով, ցրտից խցկված շտապում էին իրենց տները: Նրանց ուշադրությունն ինձ վրա հրավիրելու համար, երեխայական զիլ ծայրով իրոններն ձայն տվի. «Ես այսօր մի շատ մեծ գայլ սպանեցի»:

Բայց ո՞վ կհավատար, որ իմ տարիքի տղերը կարող է գայլ սպանել: Լսողներից ոմանք բացի չհավատալուց ծիծաղեցին, նույնիսկ նրանցից մեկը ծաղրելով ինձ



հարցրեց.

- Քո՛ւղ ամարթայի, քո՛ւղ: (Ինչպե՞ս սպանեցիր, ինչպե՞ս):

Ես մի ընդունակ կանգնեցի ձիս, դուրս քաշեցի պատյանից ատրճանակս և ձիու աջ կողմում դեպի գետին ուղղեցի նրա փողը և հետևեցի ձիու անգամ կրակեցի և սասցի՝ «Ա՛ջբը ամարթոն» (Այսպես սպանեցի), ու խթանեցի ձիուս կողերը և սլացա ձիերի ետևից: Ձիերն իրենց գոմը քշելուց հետո իմ նստած ձիու գլխից սանձը հանելիս, անկախ ինձանից դիտեցի երկինքը: Լուսինը հետևել էր մեզ և ուղիղ կանգ էր առել իմ գլխի վերևը:

Մեր տնեցիներին մեծ ուրախություն պատճառեց, որ ես ձիերը անկորուստ տուն հասցրի: Տնեցիները նույնպես չհավատացին իմ գայլ սպանելու պատմությանը, սակայն իմ ինքնասիրությունը չվիրավորելու համար նրանք այնպես ձևացրին, թե հավատում են, նույնիսկ գովեցին: Տերս՝ Աբդուլահ էֆենդին, տակավին չէր վերադարձել: Ես այդ գիշերը շատ անհանգիստ քնեցի: Երազումս գայլերի ոհմակն ինձ շրջապատել էր ու չորս կողմից հարձակվում էր վրաս: Ամենից շատ կատաղած հարձակվում էր յոնջալուղում սպանված գայլը: Ես ամբողջ ուժով գոռացի և գարթեցի: Երբ ուշքի եկա, տնեցիները երկյուղածությամբ շրջապատել էին անկողնիս: Դառավ տան-տիրուհին՝ նեճեն, հակվել էր իմ վրա.

- Ի՞նչ ունես, ծագուկս, որևէ տեղ չի՞ ցավում, թե՞ վատ երազ ես տեսել,- հարցրեց նա կարեկցանքով:

- Այո, նենե, երազումս գայլեր տեսա,- պատասխանեցի ես և ամաչեցի, որ գոռացել ու զարթնացրել էի տնեցիներին:

Դեռ արշալույսը չստացված տերս տուն հասավ: Նա վերադառնալիս իր ձիու գլուխը թեթել էր յոնջալուղ, որտեղ տեսել էր սպանված գայլին և շտապել էր տուն: Ձիուց ցած գալով նրա առաջին հարցը եղավ.

- Ձիերը եկե՞լ են...
Տնեցիների դրական պատասխանի

վրա տերս հայտնեց, որ յոնջալըղում ձիերը սպանել են իրենց վրա հարձակվող գայլին:

- Ֆիբրին ասում է՝ ես սպանեցի գայլին,- ասաց նենեն ամուսնուն:
- Ֆիբրին ո՞վ է, որ գայլ սպանի,- ասաց տերս մի տեսակ թերահավատությամբ և հետո, մի հայացք գցեց իմ վրա՝ ստուգելու նպատակով, գուցե ճի՞շտ է: Տիրոջս առաջին գործը եղավ՝ անմիջապես մարդ ուղարկել հարևան գյուղը, որտեղ բնակվում էր շրջանի հայտնի որսորդ Յասանը:

Երբ որսորդը ներկայացավ, տերս հրամայական տոնով նրան ասաց.

- Խասան (իրոնները Յասանին Խասան էին ասում), հիմա անմիջապես գնա, մեր յոնջալըղում սպանված մի գայլ կա, լավ ստուգի, տես թե գայլի վրա գնդակի հետքեր կա՞ն, բացի այդ, գազանին տիկ կհանես, որից հետո նրա մորթը կլցնես չոր խոտով ու սկսյալ մեր գյուղից ամբողջ շրջանի գյուղերում կշրջես թո գայլի հետ ու նվերներ կհավաքես: Ես վստահ եմ, որ այդ կապահովի թո ծնեռվա ապրուստը:

Թուրք որսորդ Յասանը գոհունակ դեմքով «Էվալլահ էֆենդին» ասաց ու շտապ գնաց յոնջալըղ: Որսորդը մոտ յոթանասուն տարեկան մարդ էր, երևում էր, որ նա իր երիտասարդ տարիքում վայելուչ տեսք է ունեցել՝ բարձրահասակ և հաղթանդամ: Դեռ երեկոն չէր իջել, երբ գյուղի շները միանգամից սկսեցին ոռնալ, հաչել ու կլանչել: Շները թե՛ տեսել էին և թե՛ գայլահոտ էին առել և այդ էր պատճառը, որ նրանք այդպես խառնիճաղանջ աղմուկ էին բարձրացրել: Որսորդ Յասանն իր տիկ համաց գայլին խոտով լցրել էր ու ուսն առած գալիս էր դեպի մեր տուն: Որսորդին շրջապատել էին շները, երեխաները, կանայք և տղամարդիկ, որոնք մի անկանոն թափոր կազմած հետևում էին նրան: Թափորում քայլող իրոնուհի կանայք, մանավանդ պառավները, ինչ տեսակի անեծքներ ասես չէին թափում տիկ համաց գայլի հասցեին: Նրանցից ոմանք օ՞խ էին անում և ավելացնում.

- Երևի մեր գյուղի անասուններին խժռողը հենց սա է եղել:
Որսկան Յասանը գայլին տիկ հանելուց ու նրա մորթու մեջ չոր խոտ լցնելուց հետո չորս ոտքերի կաշիների մեջ փայտից հենակներ էր դրել և լավ ամրացրել: Երբ նա մեր ընդարձակ բակում ցած բերեց իր ուսի բեռը, դրեց գետնին, գայլը կանգնած մնաց իր ոտքերի վրա: Որսորդի անմիջապես ետևից եկողները մի պահ կարծեցին, թե որսորդի ուսից ցած բերած գայլը դեռ կենդանի է, մանավանդ կանայք, տեսարանից վախեցած, ճչալով ետ քաշվեցին: Որսկանը ճակատի քրտինքը սրբելով գոհունակությամբ ծիծաղեց այդ երկչոտների վրա: Բազմության մեջ հայտնվեց տերս: Նա իր խոսքը որսորդին ուղղելով հարցրեց.

- Գայլի վրա գնդակի հետքեր կա՞ն:
- Յասան ո՞նց, այն էլ մեկի տեղ երկուսը կա, որոնցից մեկը ուղիղ կպել է սրտին և սպանել գազանին,- և Յասանը ցույց տվեց գնդակների տեղերը:

Ներկաները, որոնց թվում տերս, մոտեցան գայլին, շատ մոտիկից դիտեցին, մի քիչ էլ տնտղեցին: Սակայն տերս բավարարված չէր, նա չէր հավատում, որ ես էի սպանել գայլին, և նա իրավացի էր: Որսկանը մի տեսակ խորհրդավոր կերպով ինձ նայեց և շատ թեթև կերպով խած աչքերը խորհրդավոր կկոցեց:

- Աֆերիմ, Ֆիբրի (կեցցես Ֆիբրի),- գովում էին ինձ մեր համագյուղացի իրոնները:

Տերս գայլի չորս կողմը քննել, զննելուց հետո խոսքն ուղղելով որսորդին ասաց.

- Խասան, տե՛ս-տե՛ս, այստեղ՝ գայլի մեջքի վրա, ձիու սմբակի հետքեր կան, մի՞թե դու մաշկելուց հետո գայլի մարմնի վրա ջարդվածքներ չես նկատել:

- Ալլա՞հ, ալլա՞հ, դուք՝ չեք բեգներդ, հետաքրքիր ժողովուրդ եք, պարզ է, որ ձիերն էլ օգնել են Ֆիբրիին, այլապես 12-13 տարեկան տղան ինչպե՞ս պիտի սպաներ այս սակա գայլին: Բայց գայլը մահացել է իր սրտին ստացած գնդակից: Բայց լավ կլինի, որ Ֆիբրին ինքը պատմի, թե ինչպես է տեղի ունեցել այդ ամենը,- ասաց որսորդը:

Ներկա հասարակությունը ուշադիր սպասում էր, թե ես ինչ եմ պատմելու: Ես տատանվում էի, և չգիտեի, թե ինչպես սկսեմ: Որսորդն ինձ այդ դրությունից ազատեց և հարցրեց.

- Դե ասա, տեսները, Ֆիբրի, երբ գայլի վրա կրակեցիր, գայլը քեզանից քանի՞ քայլ էր հեռու:

- Սիս ալթաֆ,- ասացի ես և ցույց տվեցի բակը շրջապատող պատը, որը գտնվում էր հազիվ 4-5 քայլ հեռավորության վրա:

- Այդ շատ ճիշտ է,- հաստատեց թուրք որսորդը և շարունակեց իր հարցումփորձը,- դու գայլի վրա կրակեցիր հենց նրա պառկած վիճակում, այնպես չէ՞:

- Այո՛,- հաստատեցի ես:

- Երբ դու պատրաստվում էիր գայլի վրա կրակել, գայլը փախչելու փորձ չէ՞ր անում:

- Ինչպե՞ս չէր անում, նա գոռում էր իր առջևի թաթերի վրա և աշխատում էր առաջ սողալ, բայց այդ նրան չէր հաջողվում, որովհետև մեջքը չէր կարողանում քարշ տալ,- ասացի ես:

Իմ այս միանիտ պատասխանը հավաքված գյուղացիներին ուրախ ծիծաղ պատճառեց: Որսորդ Յասանն իր գործին ծանոթ դատական բժշկի նման մանրամասն բացատրեց, որ հովատակը մեկը մյուսի ետևից իր պայտած սմբակներով ուժեղ հարվածներ էր հասցրել գայլի մեջքին, կոտրել էր նրա ողնաշարը, ջարդել ու փշրել էր ձախ կողմի համարյա բոլոր կողովները:

Գյուղում բուն իրողությունը պարզվելուց հետո դարձյալ ես մնացի օրվա հերոսը: Բուն ճշմարտությունը բացահայտվելուց հետո գյուղացիների իմ նկատմամբ տածած համարումից ոչինչ չպակասեց, ընդհակառակը, նրանք ինձ շրջապատում և պատմել էին տալիս, թե ես ինչպես էի կրակել մահաներձ գայլի վրա:

Յաջող տարի՝ գարնանը, հանդում ոչխար արածացնելիս ինձ հանդիպեց որսկան Յասանը: Մենք որպես հին ծանոթներ իրար ողջունելուց հետո բարեկամաբար գրուցեցինք: Նա ինձ ասաց.

- Անցած տարվա քո և ձիերի սպանած գայլն ինձ ու թոռներիս ծնեռը յույլ տարավ,- և կատակով ավելացրեց.

- Եթե այս տարի էլ ձիերի հետ համաձայնության գայիք և գայլի տեղակ մի արջ սպանեի՞ք...

Որսորդը բաժանվելիս ասաց.

- Սիզ երմենիլեր հեն հայրըլը, հեն դե ուղուրլու, բիր միլլեթ իդիմիզ: Քահրը օլտուն սիզի բու գյունե դյուշուրեն: (Դուք՝ հայերդ, թե՛ օգտակար, և թե՛ բախտաբեր մի ազգ էիք: Անիծյալ լինի ձեզ այս օրը գցողը):

19-րդ դարի վերջերին՝ Աբդուլ Յամիդի օրոք, օր-օրի ծանրանում էր հայերի վիճակը: Իրագործվում էին զանգվածային ջարդեր: 1908 թ. երիտթուրքերը գահընկեց անելով Աբդուլ Յամիդին, հայտարարեցին ազգերի հավասարության մասին, բայց իրականում նախապայմաններ ստեղծեցին հայերի ու մյուս քրիստոնյաների զանգվածային կոտորածներ սկսելու համար, որի առիթը

ԶՈՐԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

արձակագիր, Աբխազիա, Ցանդրիփշ

ՆԱՄՇԵՆԱՆԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԱՐԴԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄ

հանդիսացավ Առաջին համաշխարհային պատերազմը: Երիտթուրքերը պատերազմում կրած անհաջողության մեղքը գցելով հայերի վրա, որպես անհավատարիմ տարրի, 1915թ. ապրիլի 24-ին սկսեցին պատմության մեջ նախադեպը չունեցող ջարդեր...

Մինչև 1915 թ. եղեռնը համշենահայերի նկատմամբ հալածանքները ստիպեցին նրանց դիմել ինքնապաշտպանության, որի կենտրոնը 1890-ական թվականներին դառնում է Չարշամբայի Գաբու-Գայա գյուղը: Չինված ջոկատը ղեկավարում է նույն գյուղի բնակիչ Յավհաննես Մինասյանը՝ Մինաս-Օղլին: Սկսվում է համշենահայերի ֆիդայական շարժումը:

Մինաս-Օղլուն հաջողվում է ինստանական թվականների կոտորածների ժամանակ Սամսունի, Չարշամբայի գավառները, և մյուս մոտակա հայկական գյուղերը պաշտպանել, հեռու պահել կոտորածներից: (Այս մասին Սաթենիկ Գեջյանը բովանդակալից հողված է տպագրել «Յամշեն» թերթի առաջին համարում՝ 1991 թ. հոկտեմբերին):

Մինաս-Օղլին հետագայում խաղաղ աշխատանքի անցնելուց հետո ևս մնում է շրջապատի, ոչ միայն հայերի, այլև բոլոր ճնշված ժողովուրդների սիրելին, որոնք դժվարին պայմաններում նրան էին դիմում խորհուրդների և օգնության համար: Այս ամենը տհաճությամբ է ընդունում իշխանությունը, և առաջարկում է Մինաս-Օղլուն հեռանալ երկրից: Նա գնում է Եգիպտոս, իսկ որոշ ժամանակ անց վերադառնում է հայրենիք, սակայն նրան թույլ չեն տալիս նավից իջնել: Նա մեկնում է Ռուսաստանում և Աբխազիայում ապրող հայրենակիցների մոտ: Թուրքիայում սահմանադրության իրականացումից հետո վերադառնում է Սամսուն: Սակայն 1914 թ. Մեծ եղեռնից առաջ սպանվում է երեք դավադիրների կողմից՝ հայրենակիցների թողնելով իր սկսած հերոսական գործի օրհնակները...

Մեծ եղեռնի ժամանակ համշենահայերի ջարդը սկսվել է 1915 թ. հունիսին: Չարդն իրագործվել է տեղափոխման պատրվակով. իբր հայերին կառավարությունը տեղափոխում էր երկրի հարավային գավառները՝ ավելի ապահով ապրելու համար, քանի որ Տրապիզոնի, Օրդուի և Սամսունի գավառները, ուր ապրում էին համշենահայերը, ավելի մոտ էին ռուսական ռազմաճակատին ու վտանգավոր նրանց կյանքի համար:

Որպեսզի ժողովրդի մեջ կասկած չհարուցվի, կառավարությունը մեկ-երկու օր առաջ մի քանի գյուղերի բնակիչներին հայտնում է տեղափոխման ժամանակը և զգուշացնում, որ իրենց հետ առնեն երեք-չորս օրվա պաշար՝ մինչև նոր բնակավայր հասնելը նեղություն չկրելու համար: Գաղթի նշանակված օրվա նախորդ գիշերը տղամարդկանց, որոնք այլալայ պատճառներով չէին գորակցվել թուրքական բանակ, իբր խորհրդակցելու էին հրավիրում գյուղապետների տներում կամ եկեղեցիներում, ու նույն գիշերն էլ աքսորում էին և ոչնչացնում տարբեր սար ու ձորերում: Իսկ առավոտյան գյուղամեջ հավաքելով կանանց ու աղջիկներին, ծերերին ու մանուկներին, քշում տանում էին, ճանապարհին՝ անտառներում ու ձորերում ոչնչացնելով զազանային ձևերով՝ այդ նպատակի համար բանտերից ազատ արձակված թուրք ավազակների և տգետ խուժանի միջոցով: Իսկ որոշ քարավանների հյուծված մնացորդները հասցվել են մինչև Դեր Չոր: Եվ ինչպես պատմությանն է հայտնի, դա ոչ թե տեղափոխում էր, այլ աննախադեպ ջարդ, ազգի բնաջնջում, եղեռն-զեցուցիչ:

Երկար տարիների որոնումներիս ժամանակ հանդիպել եմ շատ վկաների, որոնք միատեսակ նշել են, որ աքսորի ճանապարհին շատ քչերին է հաջողվել փախչել, ազատվել սպանդից. այնքան անմարդկային, զազանաբար է իրագործվել համշենահայերի ջարդը: Չնայած այդ իրեշավոր ջար-

դերին, այնուամենայնիվ, համշենահայերի մի փոքրիկ մասը փրկվել է: Ինչպես է այդ եղել: Երբ կառավարությունը հայտնել է տեղափոխման ու անհրաժեշտ գաղթի մասին, որոշ մարդիկ չեն հավատացել կառավարության ներկայացուցիչներին և ընտանիքով կամ մեմակ փախել են անտառ, բարձրացել սարերը: Մի որոշ մասն էլ փրկվել է դրացի բարի մահմեդականների կողմից: Իսկ հայ ֆիդայիների մի մասը կազմում էին այն մարդիկ, ովքեր ծառայելով թուրքական բանակի շարքերում, տեսնելով հայ զինվորների օր-օրի վատթա-

րացող վիճակը, փախչում էին բանակից:

Չարդից ազատված մարդիկ, կյանքի պահանջով գտել էին իրար, կազմել խմբեր, երկար պայքար էին մղել իրենց գոյությունը պահպանելու, տուն ու տեղ վերականգնելու համար, Կիրիշ անտառում, Կարաջալ գյուղի մոտ և այլուր տեղի ունեցող կռիվներում փոքրաթիվ ուժերով հաղթել են թուրքական զորքին, իսկ երբ տեսել են, որ այլևս անհնար է նպատակին հասնելը, մինչև 1923թ. գարունը առանձին-առանձին խմբերով հեռացել են հայրենիքից՝ հատկապես Սև ծովի հյուսիսային ափերը՝ Աբխազիա և Կրասնոդարի երկրամաս:

Ստորև կաշխատեմ ներկայացնել այդ խմբերի գլխավոր խմբապետներին, որոնք ղեկավարել են համշենահայերի պայքարը թուրքական ջարդարարների դեմ: Շատ վկաներից բացի, ինձ բախտ է վիճակվել հանդիպել Տրդակ Կարազյուզյանին, որը Կարախաչիկի եղբոր որդին էր և զինակիցներից մեկը, Անիկին, որը խմբապետ Ավետիս Չաբրյանի կինն էր և Կարաքեհյան Սերոբի քույրը, խայտյան Դանիելին, որը Գոջաման բաշի գյուղում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Կարախաչիկի հետ էր, Մաթուլյան Խաչիկին, որը Կարախանյան Կարապետի (Վաշտոն-Օղլի) և Մինասյան Սեդրակի (Միաս-Օղլի) մոտիկ զինակիցն էր և խորհրդատուն, Մաթոսյան Մելքոնին, որը ջարդի սկզբից մինչև վերջ եղել է Կարապետ Կարախանյանի (Ինե, Փափագյան Գրիգորին, որը Ջիլ Յովհաննեսի (Ջեթոնյան Յովհաննես) խմբում եղել է փոստատար, Յակոբ Քեչյանի որդու՝ Քեչյան Գևորգի հետ...

Գլխավոր խմբապետներ ասելով ի նկատի ունեմ այն, որ տարբեր շրջաններում, երկար ու ծանր պայքարի տարիներին, առաջ են եկել այնպիսի գործունյա խմբապետներ, որ մնացած խմբապետներն ու բոլոր ֆիդայիները հավաստեցել են նրանց, վստահել են իրենց կյանքն ու կամովին ենթարկվել նրանց հրամանին, չնայած մնացել են առանձին ու փոքր խմբերով, քանի որ այդպես հեշտ էր տեղից-տեղ անցնելը, սնունդ հայթայթելը:

Տրապիզոնի շրջանի ֆիդայիների մասին իմ ձեռք բերած տեղեկությունները շատ քիչ են և ինձ համար դժվար է նրանց մասին որևէ բան գրելը: Նրանց մասին մանրամասն գրել է նույն շրջանի գյուղացի, նշանավոր ֆիդայի և վրիժառու Միսաք Թոռլաբյանը իր «Օրերուս հետ» գրքում:

Ցավոք սրտի ստիպված եմ նշել, որ Սամսունի, Թերմեի և Օրդուի ֆիդայիների մասին Մ. Թոռլաբյանը հավանաբար գրել է Սերոբ Կարաքեհյանի պատմածներից, որը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ռուսաստանից փախել է Ֆրանսիա, սարել ու մահացել է Փարիզում, այնինչ իրականությունը շատ տարբեր է:

Օրդուի շրջանի գլխավոր խմբապետը եղել է Կարապետ Կարախանյանը, որը ծնվել է Փամբուկլու գյուղում: Նրան թուրքերը ոչ թե Վարդան-Օղլի, այլ Վաշտոն-Օղլի էին ասում, ինչի համար էլ ոմանք նրան Վարվաշտյան են հորջորջում: Գանթիպից /Ցանդրիփշից/ Աղլեր տանող մայրուղու կողքին փոքրիկ մի գերեզմանատանն է հանգչում նրա աճյունը, իսկ չիրմաբարին գրված է. «Կարապետ Պողոսի Կարախանյան, 1888-1950 թթ.»: Մինչև ջարդի սկսվելը Կարախանյանը զբաղվել է առևտրով, մոտիկից ծանոթ է եղել տեղի մեծածնների հետ, ունեցել է քրիստոնյա և մահմեդական շատ բարեկամներ: Սկսած 1915թ. հունիսից մինչև 1923թ. գարունը Կարախանյանը ղեկավարում է Օրդուի շրջանի ֆիդայիների պայքարը՝ կապ պահպանելով Թերմեի և Չարշամբայի գլխավոր խմբապետների հետ: Երբ 1920 թ. Օրդունում բացվում է հայկական որբանոց, նա մեծ աշխատանք է կատարում մահմեդականների մոտ պահված և անտառներում թափառող հայ երեխաներին որբանոցում հավաքելու համար՝ օգնական ունենալով Արզումանյան Արթուրին /Կարճիկ-Քուչուկ Ար-



Միսաք Թոռլաբյան

ՀՈՒՇԻ ԾՎԵՆՆԵՐ

աղետյալների, ինչպես նաև տեղի հայու-
թյան շրջապատում: Իմ անցյալն գրառու-
մները վերաբերում են մայիսի 7-12-ը ընկած



Ժամանակաշրջանին: Մայիսի 7-8-ին հան-
դիպումներ ենք ունեցել «Սուխումի» և
«Չեչյուսկինցիներ» տուրքազաններում...
Նվիրել ենք սրտաբուխ խոսքեր ու գրքեր:
9-ին՝ Գուրիփշի շրջանի Ներքին Մերխ-

ուլի գյուղի հայկական դպրոցում մասնակ-
ցել ենք մայիսյան հաղթանակի առթիվ
հուշարձանի բացմանը, 10-ին Գանթիադի-
ում հանդիպել ենք Անդրանիկի
գինվորին ու իր ընտանիքին, և.
Արմյանի անվան դպրոցում վա-
յելել ենք հայ երեխաների ուրա-
խությունն ու հրճվանքը, «Չեչ-
յուսկինցիներ» պանսիոնատում
մեր համերկարացիներին նվիրել
մեր գրքերը՝ արցունքները կուլ
տալով: 11-ին Սուխումի Հով-
հաննես Թումանյանի անվան
հայկական դպրոցի հյուրերն
էինք և հայկական վերընծայու-
վող ոգու վկաններ: Ունեցանք
ելույթներ, նվիրեցինք գրքեր:
Պրիմորսկոյե գյուղի 2-րդ հայ-
կական դպրոցում, ուր տեղա-
վորված էին Կիրովականի ու Լե-
նինականի մեր հայրենակիցնե-
րը, մենք և արխագահայ հարգարժան
գրողները հանդես եկանք մեր ստեղծագոր-
ծություններով: Մինչև հիմա ականջներումս
են փոքրիկ Հայաստանի երգած Ջիվանու
«Հայրենիքիս ջուրը» երգի հոգեպարար մե-

ղեղինները: 12-ին Շահումյանովկայի և Բո-
գափոստայի դպրոցներում էինք: Պարզ-
վեց, որ այդ վայրերում միայն մեզանից 20
տարի առաջ է Հայաստանից գրող եկել՝
Սիլվա Կապուտիկյանը:
Իմ փոքրիկ գրառումներում չկա այն, որ
մենք հյուրընկալվեցինք արժանահիշա-
տակ գրող Հակոբ Գուրույանի տանը՝ ծո-
վափնյա լեռների խորքում: Ցավոք, մեկ
տարի հետո լսեցինք նրա մահվան բոթը:
Այնքան կենսախիղճ էր ու մարդասեր –
Հայ: Այնքան մահից հետո:
Իմ գրառումներում չկան Սուխումի հյու-
րանոցում մեր անցկացրած օրերի տաք ու
պաղը, մեր ստացած տպավորությունների
անհագուրդ հոգնությունը: Ժամանակը
եռում էր: Մենք Հայաստանից ոգի ու լույս
էինք բերել մեր հայրենակիցներին ու տե-
ղաբնակ հայությանը: Մենք բավարարված
էինք, բայց մեր ունկնդիրները սպասում էին
ավելիին և հայրենիք վերադառնալուց հե-
տո նոր հանդիպումների: Շատ բան չհասց-
րինք: Հասցրածն էլ չգրառեցինք և... ապ-
րում է մեր հոգիներում:
Այսօր, օգտվելով առիթից, «Չայն համ-
շենականին» են հանձնում իմ հոգու ուշա-
ցած պարտքը՝ Անդրանիկի վերջին գինվո-
րի լուսանկարով հանդերձ...
ՀԱՄԼԵՏ ԿԱՐԾԻՎՅԱՆ
բանաստեղծ

թինին/։ Վարդանյանի ֆիդայական
կյանքում նրա ամենամոտիկ ընկերն ու
զինակիցը եղել է Մինաս-օղլին (Սեդ-
րակ Մինասյանը, Դելի Սեդրակը), որը
սպանվել է Ասարի քարի մոտ դարանա-
կալած թուրքերի ձեռքով: Նա շատ ան-
գամ է եղել առանձին խմբով, բայց
միշտ Վարդանյանին մոտիկ, նրան ըն-
կեր ու զինակից: Ցավոք, եղել են մար-
դիկ, որոնք գիտակցաբար Մինաս-
օղլու սպանությունը վերագրել են Վար-
դանյանին՝ ցանկանալով վարկաբեկել
Վարդանյանին, նրան դարձնել անհե-
ռատես խմբապետ, և երկրորդը՝ իրենց
հռչակել համաշենահայերի ամենակա-
րող խմբապետ: Խոսքս, իհարկե, վերա-
բերում է Սերոբ Կարաբեղյանին:
Մինասյան ժամանակ պետք է նշեն, որ
նա է հորինել այն սուտը, որ իբր Կարա
Խաչիկի գլուխը կտրել են կանայք: Կա-
րա Խաչիկը (Կարագոզյանը) ծնվել է
Թերմեի գավառի Հոյուն գյուղում: Ցա-
վոք, դեռ չի ճշտվել նրա ծննդյան թիվը:
Կարա Խաչիկը եղել է Ջիլ Օհաննեսի
մոտիկ ընկերն ու զինակիցը, և նրա
սպանվելուց հետո ղեկավարել է Թեր-
մեի շրջանի ֆիդայիներին: 1917 թ. մի-
անալով մի քանի խմբերի հետ կենաց-
մահու կռիվ է վարում թուրքական մի
գործառնախ դեմ և հաղթում: Գերված
զինվորներին վերադարձնում է Սամ-
սոն, բայց սպաներին գլխատում է: Կա-
րա Խաչիկը 1922 թ. հրավիրվում է Գո-
ջաման գյուղ հույն խմբապետ Սարու
Յանիի հետ (ոչ թե Սարյան) խորհրդակ-
ցության և դավադրաբար սպանվում:
Նրա ինը զինակիցներից ազատվում է
միայն մեկը՝ Թոքմակչյան Գրիգորը:
Կարա Խաչիկը և Ջիլ Օհաննեսը մինչև
եղեռնը նույնպես զբաղվել են
առևտրով: Ջիլ Օհաննեսը եղել է համ-
շենահայերի ամենախիզախ ու հնարա-
միտ խմբապետը: 1916թ., երբ արդեն
լուծվել էր համաշենահայերի զանգվա-
ծային բնաջնջման հարցը, տեղի իշխա-
նությունները առաջինը որոշում են
սպանել Ջիլ Օհաննեսին: Նրա խումբը
ոչնչացնելու համար ուղարկվում է մի
գործառնախ, որի հետ առաջին ընդհարու-
մը տեղի է ունենում Չանկիրիչ գյու-
ղում: Չանկիրիչում չունենալով հաջո-
ղություն, գործը սկսում է հետևել Ջիլ
Օհաննեսի խմբին, որը քաշվում է Կի-
րիչ սարի բարձունքը և մի ընդարձակ

բացատում գիշերը իրեն հետապնդած
գործին օգուն է ծուղակի մեջ, որտեղ
հայրուրավոր զոհեր տալով թուրքա-
կան զորքը փախչում է մինչև Թերմե:
Այդ իսկ պատճառով թուրքերը դիմում
են իրենց հարազատ ձևին՝ դավադրու-
թյանը: 1917 թ. սկզբին Ջիլ Օհաննեսը
սպանվում է վարձված էշկիաների
(ավագակների) կողմից, որոնցից
վտանգ չէր սպասում (Քեսկուն-Օղլի
եղբայրների) Թեք Քիրեզ կամ Դեպե Քի-
րեզ գյուղում: Այստեղ ցանկանում են
նշել, որ «Չայն համաշենական» թերթի
2004թ. առաջին համարում լույս տե-
սած Գեղամ Սնապյանի «Վարդուկը»
վիպակից հատվածում գրված է, որ
համաշենահայ հայտնի հայդուկապետ
Ջիլ Օհաննեսը Հովհաննես Մինասյանն
է, այնինչ Ջիլ Օհաննեսը Հովհաննես
Մինասյանը չէ: Ջիլ Օհաննեսը ոչ թե
Օրդուի շրջանից էր, այլ Թերմեի շրջա-
նից, և իր ֆիդայական կյանքն անց-
կացրել է Թերմե-Չարշամբայի սար ու
ձորերում՝ միշտ սերտ կապի մեջ լինե-
լով Օրդուի շրջանի գլխավոր խմբա-
պետ Վաշտոն-օղլու (Կարապետ Վար-
դանյան), Թերմե-Չարշամբայի շրջան-
ների գլխավոր խմբապետների՝ Չաբը-
օղլու (Ավետիս Չաբրյան), Կարա Խա-
չիկի (Խաչիկ Կարագոզյան), Հակոբուսի
(Հակոբ Քեհյան) հետ: Իսկ Ջիլ Օհան-
նեսի անունը էր Ջեյթունյան Հովհան-
նես. նա դավադրաբար սպանվել է
1917թ. սկզբին Թեք Քիրեզ կամ Դեպե
Քիրեզ գյուղում:
Այստեղ ուզում են նշել նաև, որ
«Չայն համաշենական» 3-րդ ժողովածու-
ում (Երևան, 1989թ.) Ս. Մինասյանի և Հ.
Կալայջյանի հեղինակությամբ լույս տե-
սած «Քուչուկ Արթինը» հերոսապատու-
մի մեջ ևս տեղ է գտել մի թյուրիմացու-
թյուն. այնտեղ գրված է, որ Քուչուկ Ար-
թինի ղեկավարության տակ գործել է
նույնիսկ Կարապետ Վարդանյանը: Այդ
Վարդանյանը նույն Վաշտոն-օղլին է,
որը 7-8 տարիներ ղեկավարել է Օրդուի
շրջանի ֆիդայիներին և 1923 թ. գար-
նանը 105 հոգով, այդ թվում և Քուչուկ
Արթինը, թուրքական նավով եկել հասել
են Վեսյուլայի (Ալլերի շրջան) ծովափը:
Իհարկե, Քուչուկ Արթինը (Արզումանյան
Արթինը, Արզում-օղլին) եղել է հարգի
ֆիդայի, փոքր խմբապետ, բայց միշտ,
ինչպես Օրդուի շրջանի մյուս խմբա-

պետները, ենթարկվել է Վարդանյան
Կարապետին:
Ուզում են նշել նաև, որ համաշենա-
հայ ֆիդայիների մասին ունեն մի քա-
նի գրավոր հուշեր, որոնք կան վկա-
ներն են թելադրել, կան նրանց թելադ-
րած պատմությունները փոխանցել են
ինձ. հատկապես ուզում են նշել Ջիլ
Օհաննեսի փոստատար Գրիգոր Փա-
վազյանի պատմածը Ջիլի և նրա խմբի
մասին, որը գրի է առել համաշենահայ
անվանի բանաստեղծ և մանկավարժ
Աշոտ Քոչկոնյանը:
Չարշամբայի շրջանի ֆիդայիների
գլխավոր խմբապետը եղել է Հակոբ
Քեհյանը՝ Հակոբուսը: Նա ծնվել է
1889թ. Չախմախ գյուղում: Հակոբը
եղել է հասարակ գյուղացի: Եղեռնի
օրերին հազիվ փրկվելով մահից,
փախչում է բանակից, վերադառնում է
գյուղ, միանում սարերում ապաստա-
նած մարդկանց, դառնում նրանց խմ-
բապետը: 1916թ. հետը շատ հայեր
վերցնելով ծովով հասնում է Արխագիա:
1917 թ. միանում է տեղի կարմիր պար-
տիզաններին, դառնում Լակոբայի ըն-
կերը: Հետո մի խումբ զինակիցների
հետ գնում միանում է Անդրանիկի գորա-
վարի բանակին, իսկ հայրենիքից Անդ-
րանիկի հեռանալուց հետո վերադառ-
նում է Չարշամբա և մինչև 1923 թ. կր-
կին ղեկավարում ֆիդայիներիին:
1923թ. հավաքելով տեղում մնացած
հայերին և հույներին կրկին գալիս է Ար-
խագիա, բնակություն հաստատում
Աժոնի մոտ, Անուխվա գյուղում, ուր և
մահանում է 1952 թ.:
Հոգվածս վերջացնելուց առաջ ու-
զում են նշել, որ համաշենահայ ֆիդայի-
ների 7-8 տարվա մղած պայքարը մեկ
հողվածի սահմաններում անհնար է
ամփոփ ներկայացնել: Օրդուի, Թեր-
մեի և Չարշամբայի շրջանների ֆիդա-
յիների մասին հնարավորինս ընդար-
ձակ պատմել են իմ «Չանկիրիցիների
երգը» վիպակում, որը լույս է տեսել
1997թ. Երևանում և «Օտար ափերում»
վեպում, որը նոր են ավարտել:

ՊԱՇԿՈՎՍԿԻ ԱՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Կրասնոդար քաղաքի մեջ մտնող Պաշկովսկի
ավանի հայկական համայնքը կազմավորվեց
2003թ. օգոստոսի 25-ին: Ունի հայկական կիրա-
նություն դպրոց, ուր հաճախում են 40 հայ երեխաներ.
ուսուցանվում են հայոց լեզու (ուսուցչուհի՝ Գալի-
նա Սարգսյան), հայ երգ ու երաժշտություն (ուս.
Գագիկ Չալինյան), հայ պարարվեստ (ուս.՝ Լիանա
Պետրոսյան), ասմունք (ուս.՝ Գալինա Սարգսյան),
կա նաև շախմատի ակումբ և ֆուտբոլի թիմ՝
«Արաքս»: Դպրոցի նպատակն է սովորեցնել հայե-
րեն, ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը,
ավանդույթներին, արվեստին, համայնքի հայ երի-
տասարդությանը, դաստիարակել հայկական ոգով:
Համայնքի գործունեության մեջ մեծ դեր են խաղում
գրական-գեղարվեստական երեկոները, որոնց մաս-



նակցում է քաղաքի մտավորականությունը: Նշվում
են Հայաստանի, Արցախի, Ռուսաստանի բոլոր տո-
ները: Սերտ կապերի մեջ ենք քաղաքի մյուս կազ-
մակերպությունների հետ, կազմակերպում ենք հա-
մատեղ համերգներ և երիտասարդական երեկոներ:
Համայնքի կյանքում ակտիվ դեր են խաղում
երիտասարդներ Լիանա Մեքումյանը և Լուսինե
Կարապետյանը: Այս ամենը ղեկավարում են հա-
մայնքի նախագահ Գևորգ Սերոբյանը և տեղակալ
Վաչագան Սերոբյանը:
Աշակերտներից ակտիվ են Անդրանիկ Հունան-
յանը, Արինա Խաչատրյանը, Անուշ Լևոնյանը, Աննա
Ավետրյանը, Մարիամ Քյարամյանը, Լուիզա Մխի-
թարյանը, Վլադիմիր Միքայելյանը, Լիանա Մինաս-
յանը, Դիանա Օջախանյանը և ուրիշներ:
ԳԱԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**«Համաշեն» հայրենակցական-բարեգործական հասարակական
կազմակերպության խորհուրդը խորապես վշտացած է
խորհրդի անդամ, Հայաստանի կույրերի միավորման
կենտրոնական վարչության նախագահ
Արել Հակոբյանի սիրելի տղան՝
ՆԱԶԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
անժամանակ մահվան կապակցությամբ և ցավակցում է
ընտանիքի անդամներին, հարազատներին և մերձավորներին:**

2005 Ն ՀԱՄԱՇԵՆԱԿԱՆ
Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական
հասարակական կազմակերպություն: Երևան, Ա. Իսահանյան 18: Հեռախոս՝ (+374+10) 25 21 26:
Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.:
Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին:
Արտատպության կամ մեքենայով դեպքում հղումը «Չայն համաշենականին» պարտադիր է:
“ДЗАЙН АМШЕНАКАН” (ГОЛОС АМШЕНСКИЙ)
Ежемесячная газета Земляческой благотворительной общественной
организации “АМШЕН” (г. Ереван). Тел. (+374+10) 25 21 26.
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЫАН
Газета распространяется бесплатно.
“HAMSHEN” Compatriotic-charitable public organization (Yerevan).
“DZAYN HAMSHENAKAN”. Editor in chief SERGEY VARDANYAN
E-mail: dzaynhamshenakan@yahoo.com